ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdimunicipality@gmail.com

N ԱՀ-1026/26
16 մարտ 2026թ.

«ՄԱՆԵՍ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ» ՍՊԸ

ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան

ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի և կոնսորցիումով հանդես եկած «Մանես կոնստրուկցիա» ՍՊԸ, «Հոբոսշին» ՍՊԸ, «ԱՅՊՈՇԻՆ» ՍՊԸ,«Վանդաժի» ՍՊԸ միջև 22/01/2026թ. կնքվել է «ԼՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/11» ծածկագրով պայմանագիր: Սակայն հետագայում պարզվել է, որ «Մանես կոնստրուկցիա» ՍՊԸ-ի իրական շահառուն ընդգրկված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետի՝

այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է

պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րա կետի՝

1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հայտնում ենք, որ «Կապալառուի» նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին » ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ հիմք

«Գնումների մասին » ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-մասի 6-ի/ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

Միաժամանակ հայտնում ենք, որ Պատվիրատուի՝ Ալավերդու համայնքապետարան, պատճառաբանված որոշմամբ Ձեր կազմակերպությունն ընդգրկվելու է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և պայմանգրի ու որակավորման ապահովման երաշխիքները ներկայացվելու են համապատասխան առևտրային բանկ՝ գանձումներ կատարելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ Ընկերության Պայմանագրի և որակավորման ապահովման գումարների Պատվիրատուի 900265121104 հաշվեհամարին սահմանված ժամկետներում վճարելու դեպքում Ընկերությունը գնումներիգործընթացինմասնակցելուիրավունքչունեցողմասնակիցների ցուցակումընդգրկելումասինպատվիրատուիղեկավարիպատճառաբանվածորոշումըչին երկայացվիլիազորմարմնին:
Պայմանագրիևորակավորմանապահովումներըկանխիկձևովվճարվածլինելուդեպքում՝ անհրաժեշտէՊատվիրատուիններկայացնելՀՀֆինանսներինախարարությունԸնկերությ

անկողմից ուղղված դիմումի պատճենը՝ ապահովման գումարները Պատվիրատուի՝ նշված հաշվեհամարին փոխանցելու մասին: Նշված գումարների վճարումը պետք է իրականացվի լիազոր մարմնին որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան պայմանագիր կնքած անձին ցուցակումներառելուվերջնաժամկետըլրանալուօրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

Կապ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Քառյան